

«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ
գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար



Ա. Պետրոսյան

« 11 » օգոստոսի 2020թ.

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի գիտական խորհրդի թիվ 3 առ 11.08.2020թ. նիստում, որին ներկա էին՝

- տ.գ.թ. Ս.Ս. Գնունի - խորհրդի նախագահ,
- տ.գ.թ. Հ.Տ. Գնունի - քարտուղար,

անդամներ՝

- տ.գ.թ. Ա.Ս. Հարությունյան
- տ.գ.թ. Վ.Հ. Սարգսյան,
- տ.գ.թ. Ռ.Ջ. Մուրադյուն,
- Հ.Փ. Հակոբյան:

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Գոհար Վաչագանի Հարությունյանի «Կառուցվածքային թվերի հանրահաշվի մեթոդով էլեկտրական շղթաների ընհանրացված պարամետրերի հետազոտումը» թեմայով Ե.09.01 - «Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա, էլեկտրատեխնոլոգիաներ» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Առաջատար կազմակերպության կարծիքին է ներկայացվել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն կազմված ներածությունից, չորս գլուխներից և եզրակացություններից: Աշխատանքը շարադրված է 117 էջի վրա, պարունակում է 67 նկար, 13 աղյուսակ և 98 անուն ընդգրկող գրականության ցանկ:

Թեմայի արդիականությունը

Աշխատանքը նվիրված է էլեկտրական շղթաների ընհանրացված պարամետրերի հետազոտմանը: Ատենախոսությունում բերված են ընհանրացված պարամետրերի հետազոտման արդյունքները համասեռ շղթայական սխեմաների համար, որոնք կազմված են կամայական բեռնավորում ունեցող նույնական ոչ սիմետրիկ քառաբևեռներից:

Ատենախոսությունում հետազոտվել է էլեկտրական շղթայի ռեժիմային պարամետրի անալիտիկ կախվածությունը պասիվ պարամետրից, ինչը հանդիսանում է արդիական խնդիր:

Աշխատանքի տեսական հիմք են հանդիսացել գծային էլեկտրական շղթաների տեսությունը, կառուցվածքային թվերի հանրահաշվի մեթոդը, գրաֆների տեսությունը, իրական և կոմպլեքս փոփոխականների ֆունկցիաների տեսությունը:

Ստացված արդյունքների և եզրակացությունների նորույթը

Հետազոտության ընթացքում ստացված արդյունքներում և եզրակացություններում առկա են հետևյալ գիտական նորույթները.

1. առաջարված է ռեժիմների հետազոտման մեթոդ համասեռ ճյուղավորված շղթայական սխեմայի համար, որը կազմված է կամայական բեռնավորում ունեցող ոչ սիմետրիկ քառաբևեռներից,
2. համասեռ շղթայական սխեմայի համար հետազոտվել է ըստ հոսանքի և լարման փոխանցման ֆունկցիայի էքսրեմալության հատկությունը,
3. ստացվել և հետազոտվել է էլեկտրական շղթայի ռեժիմային պարամետրի անալիտիկ կախվածությունը պասիվ պարամետրից,
4. բացահայտված են քառաբևեռների միացման կանոնավորության հայտնաբերման բարդությունները և առաջարված է բաղադրյալ բազմաբևեռների ընհանրացված պարամետրերի որոշման մեթոդ:

Գիտական դրույթների հավաստիությունը

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովված է ստացված գիտական արդյունքների հիմնավորմամբ: Հայցորդի կողմից տեսական և գործնական

Ատենախոսությունն իր արդիականությամբ, նորությամբ, հիմնավորումներով, հրապարակումներով, հիմնական արդյունքների կարևորությամբ, ձևակերպմամբ և ծավալով համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին և գնահատվում է, որպես գիտության տվյալ բնագավառում կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված տեխնիկական մշակում:

Հրապարակումները

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 9 աշխատություններում:

Սեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսությանը և պարունակում է դրա հիմնական դրույթները:

Նկատված թերություններ և դիտողություններ

1. Ատենախոսության գրականության ցանկում բերված Հ.Տ. Ադոնց «Многополюсник» հիմնարար աշխատանքում ներառված են բազմաթիվ խնդիրներ, սակայն առաջին գլխում այդ աշխատանքը լիարժեք դիտարկված չէ:
2. Ատենախոսության երկրորդ գլխում շղթայական սխեմաների էքստրեմալության հատկության հետազոտության ժամանակ «2.23» ֆունկցիան, որը դիսկրետ արգումենտի ֆունկցիա է, ածանցվում է որպես անընդհատ արգումենտի ֆունկցիա՝ ինչը լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի:
3. Ատենախոսության երրորդ գլխում դիտարկվել է եռաֆազ 6, 10, 35 կՎ բաշխիչ ցանցերում միաֆազ հողակցման դիմադրության ընտրության հարցը: Բերված է թվային օրինակ ցանցի սխեմայի տրված պարամետրերի դեպքում հողանցման դիմադրությունների այնպիսի բազմության որոշման համար, որոնց դեպքում ֆազի հոսանքը ստացվում է նախապես ընտրված մեծությանը հավասար: Ցանկալի կլիներ, որ թվային օրինակը համապատասխաներ գործող ցանցին:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է արձանագրել, որ կատարվել է խորը հետազոտական աշխատանք, իսկ բերված թերությունները էական ազդեցություն չեն թողնում աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա:

Եզրակացություն

Գոհար Վաչագանի Հարությունյանի «Կառուցվածքային թվերի հանրահաշվի մեթոդով էլեկտրական շղթաների ընհանրացված պարամետրերի հետազոտումը» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն աշխատանք է, կատարված է բարձր գիտական մակարդակով և ունի զգալի գործնական արժեք, իր բովանդակությամբ և գիտական մակարդակով լիովին համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի թեկնածուական ատենախոսությունների պահանջներին, իսկ հեղինակը՝ Գոհար Վաչագանի Հարությունյանը արժանի է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ե.09.01 - «Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա, էլեկտրատեխնոլոգիաներ» մասնագիտությամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝

Տ.Ս. Գնունի

Քարտուղա



Հ.Տ. Գնունի